Սիլվիա ուխտաւորութեամբ այցելեց այս քաղաքը՝ եօթն աղբիւրներէ քիչ հեռու, և գրած է հետեւեալ հետաքրքրական նկարագրութիւնը. «Կափառնաումի մէջ, Պետրոս առաքեալին տունը փոխած են եկեղեցիի, որուն պատերը մինչև հիմակ կ'երևան։ Հոն, Տէրը բժշկեց անդամալոյծը։ Կը տեսնուի նաև այն սինակոկը ուր բժշկեց այսահարը. ան շատ մը աստիճաններ ունի և շինուած է յղկուած քարերով»։ Կոմս Ցովսեպոս սինակոկը թողուց հրեաներուն և հոն չինեց նոր պազիլիքա մը։ Բոլոր ուխտաւորները մինչև 1283 կը հաստատեն միևնոյն վկայութիւնները (Bargd. էջ 424-426)։

Այժմ յիշենք ուրիշ աւանդութիւններ։

Քրիստոսի ղերան քարոզին տեղւոյն աւանդութիւնը. — Բնական էր որ Քրիստոսի ղերան քարոզին համար աւանդութիւնը պիտի ընտրէր որոշ տեղ մը, Կափառնաումի մօտ։ Եթէ հնագոյն ուխտաւորները անոր մասին յիշատակութիւն մը չունին, բայց Պետրոս սարկաւագ օգտագործելով անյայտ աղբիւր մը՝ կը խօսի եօթն աղբիւրներու մօտ ղերան մը վերաբերեալ քարայրի մը մասին, ուր Յիսուս արտասանեց Երանութիւնները։ Ըստ երևոյթին՝ այս այն միևնոյն ղեռն է որ ըստ Burchardի (1283), արեւելեան ճանապարհին վրայ երկու նետընկէց երկարութիւն և մէկ քարընկէց լայնութիւն ունի, պատով մը փակուած աղբիւրի մը վրայ. այն ժամանակ պէտք կ'ըլլայ նոյնացնել զայն եօթն աղբիւրներու արևելքը գտնուած ժայռոտ բլուրին։ Ժ.Բ. դարուն Ֆրէտէլիւս և Ցովհաննէս Վըրզպուրկցի ուղեգիրները անտարակոյս միևնոյն տեղը ի նկատի ունէին երբ ղերան զառիվայրը կը համարէին